ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 30 » մայիս 2025թ. No 3273 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 4896-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի հունիսի 10-ի թիվ 96 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը և 2025 թվականի մայիսի 14-ի թիվ 29 որոշման դրույթները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև հատուկ տնտեսական միջոցների կիրառման պատճառով հանրապետության դեղագործական շուկայում դեղերի բացակայության վտանգի առաջացման պայմաններում դեղերի անխափան շրջանառությունն ու հասանելիությունն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արայիկ Բաղրյանին՝

1) Հայաստանի Հանրապետությունում մարդու օգտագործման դեղերի պետական գրանցման հայտերի ընդունումը մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը հայտատուի դիմումի համաձայն իրականացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 78 որոշմամբ սահմանված բժշկական կիրառման դեղամիջոցների գրանցման և փորձաքննության կանոնների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն.

2) սույն հրամանի մասին իրազեկել դեղերի պետական գրանցման հայտատուներին:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում մարդու օգտագործման դեղերի պետական գրանցման հայտերը ժամանակավոր կարգի համաձայն ընդունելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 4639-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 4896-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157